Դրամաշնորհային աջակցություն «Մարդկային անվտանգության ծրագրերի» համար ՖՏ 2023. «Արագածոտնի մարզի Ապարանի համայնքապետարանի ամբուլատոր-համաբուժարանային բուժհաստատությունների հիմնանորոգման» ծրագրի ստորագրման արարողություն

2023 թվականի օգոստոսի 17-ին Արագածոտնի մարզում տեղի ունեցավ «Արագածոտնի մարզի Ապարանի համայքքապետարանի ամբուլատոր-համաբուժարանային բուժհաստատությունների վերանորոգման» ծրագրի՝ մինչև 87,182 ԱՄՆ դոլար ֆինանսավորմամբ Մարդկային անվտանգության «Grassroots» ծրագրերի համար դրամաշնորհային աջակցության ստորագրման արարողությունը:

Դրամաշնորհի պայմանագիրը կնքվել է Հայաստանում Ճապոնիայի դեսպան պարոն Մասանորիի Ֆուկուշիմայի և Ապարանի համայնքապետ Կարեն Եղիազարյանի միջև: Արարողությանը ներկա էին նաև Ապարանի համայնքապետարանի առաջին տեղակալ Արկադի Կարապետյանը, Ապարանի համայնքապետարանի և ամբուլատորիաների աշխատակազմերը:

Ծրագրի նպատակն է բարելավել Արագածոտնի 3 ամբուլատորիաներում՝ Արագած, Շենավան և Քուչակ բժշկական ծառայությունների որակը՝ վերանորոգելով շենքերը և տեղադրելով ջեռուցման, ջրամատակարարման և կոյուղու համակարգեր: Արդյունքում, քաղաքի մոտ 13,000 բնակիչ կօգտվի ծրագրից:

Դեսպան Ֆուկուսիմայի ելույթը

Ապարանի համայնքապետարանի փոխքաղաքապետ պարոն Հրայր Մկրտչյանի ելույթը

Դեսպան Ֆուկուսիմայի և պարոն Եղիազարյանի միջև դրամաշնորհային պայմանագրի ստորագրում

Շրջայց ամբուլատորիայում, որը կվերանորոգվի ծրագրի շրջանակներում